«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածում՝

1. 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Խնամքի նպաստի իրավունք ունի նաև Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում երեխայի հետ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ նույն գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված և փաստացի բնակվող (այսուհետ՝ գյուղական բնակավայրում բնակվող) ծնողը, մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը, եթե երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն մեկ տարի անընդմեջ հաշվառված է և փաստացի բնակվում է գյուղական բնակավայրի հասցեում: Երեխայի ծննդյան օրվա դրությամբ մեկ տարուց պակաս գյուղական բնակավայրի հասցեում հաշվառում ունեցող (բնակվող) ծնողը խնամքի նպաստի իրավունք ունի Կառավարության սահմանած դեպքերում: Սույն մասում նշված խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է, անկախ ծնողին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խնամքի նպաստ նշանակելու և վճարելու հանգամանքից:».

2. 4-րդ մասը «հոդվածների» բառից հետո լրացնել «՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստ նշանակելու վերաբերյալ» բառերով.
3. 5-րդ մասի առաջին նախադասության մեջ «Խնամքի» բառը փոխարինել «Խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի» բառերով, իսկ երկրորդ նախադասության մեջ «Ծնողին» բառը փոխարինել «Խնամքի արձակուրդում գտնվող ծնողին» բառերով.
4. 5-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Գյուղական բնակավայրում բնակվող ծնողին խնամքի նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում բնակչության պետական ռեգիստրի տվյալները ծնողի և երեխայի հաշվառման (բնակության) վայրի վերաբերյալ, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության

իրավասու մարմինը: Եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը կամ երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողը գյուղական բնակավայրում հաշվառված է (բնակվում է) մեկ տարուց պակաս, կամ ծնողը և երեխան գյուղական բնակավայրում հաշվառվում են (բնակվում են) երեխայի ծնունդից հետո, ապա խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկությունները (այդ թվում՝ պայմանները, կարգը, ժամկետները) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածում.

1. 2-րդ մասի «Խնամքի նպաստը» բառերը փոխարինել «Խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստը» բառերով.
2. 2-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Գյուղական բնակավայրում բնակվող ծնողին խնամքի նպաստը նշանակվում է դիմումը մինչև երեխայի 2 տարին լրանալը ներկայացվելու դեպքում՝

1) երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում.

2) երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են նշված ժամկետը լրանալուց հետո:».

3. 5-րդ մասը «ավարտվելը» բառից հետո լրացնել «(եթե նպաստ նշանակվել է խնամքի արձակուրդում գտնվող ծնողին)» բառերով.
4. 6-րդ մասը «կենտրոնը» բառից հետո լրացնել «սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո» բառերով.
5. 7-րդ մասի 1-ին կետի «առկա չէ սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին» բառերը փոխարինել «բացակայում է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին» բառերով.
6. 7-րդ մասի 2-րդ կետի «տվյալներ» բառից հետո լրացնել «՝ եթե խնամքի նպաստը նշանակվել է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա» բառերով.
7. 7-րդ մասի 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1. երեխայի կամ ծնողի՝ հաշվառումից դուրս գալու և Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում գյուղական բնակավայրի հասցեով կրկին չհաշվառվելու կամ գյուղական բնակավայր չհանդիսացող բնակության վայրի (այսուհետ՝ այլ բնակավայր) հասցեով հաշվառվելու (բնակվելու), կամ փաստացի բնակության վայրը փոխելու և այլ բնակավայրում բնակվելու դեպքում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի, եթե խնամքի նպաստը նշանակվել է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1.1-ին մասի հիման վրա, կամ»:

Հոդված 3. Օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասում.

1. 3-րդ և 5-րդ կետերը «դեպքում» բառից հետո լրացնել «, եթե խնամքի նպաստը նշանակվել է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա» բառերով.
2. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ծնողի՝ աշխատանքի անցնելու դեպքում, իսկ եթե ծնողը աշխատում է մեկից ավելի գործատուների մոտ, ապա որևէ գործատուի մոտ աշխատանքի անցնելու դեպքում (խնամքի արձակուրդի ժամկետը լրանալու կամ խնամքի արձակուրդը, մինչև ժամկետը լրանալը, ընդհատվելու դեպքում), եթե խնամքի նպաստը նշանակվել է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա.».

3. 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին ենթակետով.

«7.1) երեխայի կամ ծնողի՝ հաշվառումից դուրս գալու և Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում գյուղական բնակավայրի հասցեով կրկին չհաշվառվելու կամ այլ բնակության վայրի հասցեով հաշվառվելու (բնակվելու), կամ փաստացի բնակության վայրը փոխելու և այլ բնակավայրում բնակվելու դեպքում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի, եթե խնամքի նպաստը նշանակվել է սույն օրենքի 27-րդ հոդվածի 1.1-ին մասի հիման վրա.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2020 թվականի հուլիսի 1-ին և դրանից հետո։